ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 17 - Ն « 10 » հոկտեմբեր 2012թ.

ԴՈՆՈՐԻ ԱՐՅՈՒՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել դոնորի արյունատվությունը հաստատող փաստաթղթի ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ի.Աբգարյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի
Հոկտեմբեր 10-ի N 17 -Ն հրամանի

Ձև

Դոնորի արյունատվությունը հաստատող փաստաթուղթ №

Բժշկական կազմակերպության
անվանումը _____

Տրվում է դոնոր _____-ին առ այն, որ
անուն, ազգանուն

նա հանձնել է արյուն/արյան բաղադրամաս (ընդգծել) «____»_____20 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 175 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ մասի և 207 հոդվածի համաձայն, արյուն կամ արյան բաղադրամասեր հանձնելու օրը դոնորը ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից՝ միջին աշխատավարձի պահպանմամբ:

Արյան ծառայության ստորաբաժանման ղեկավար _____
Ստորագրություն

Տրամադրման ամսաթիվ «____»_____20 թ.